

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (սեղմագիր)**

ՀՀ կրթության բնագավառի 2010թ. գերակա խնդիրներն են եղել՝  
-նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացումը,  
-հանրակրթության ոլորտի բարեփոխումները,  
-նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացումը,  
-բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների:

Հանրակրթության որակի և հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու տեսանկյունից կարևոր խնդիր է շարունակում մնալ նախադպրոցական կրթության մեջ երեխաների ցածր ընդգրկվածությունը: Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական աշխատանքներն իրականացվել են համաձայն «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի»: ՀՀ Արարատի և Արագածոտնի մարզերի 41 համայնքում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար հիմնվել են նախակրթարաններ:

Այլընտրանքային մոդելներով գործող նախադպրոցական խմբերում աշխատող շուրջ 100 մանկավարժական և ղեկավար կադրեր մասնագիտական որակի բարձրացման նպատակով մասնակցել են գործնական սեմինար-պարապմունքների:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի» պահանջներով, ինչպես նաև նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման շարունակականությունն ապահովելու նպատակով, մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Համապատասխան հաշվարկների հիման վրա ՀՀ պետական բյուջեում կնխատեսվեն միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով, ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից և անհրաժեշտության դեպքում՝ նաև ներդրումային ծախսերի մասով:

ՀՀ ԿԳ նախարարությունը 2010 թվականին շարունակել է իրականացնել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացը: Դրանց ներդրումը կատեղծի նպաստավոր պայմաններ հանրակրթության ոլորտում իրավիճակը զգալիորեն բարելավելու համար:

Հանրակրթության կառավարման ոլորտում կադրային քաղաքականության

տեսակետից կարևորագույն ձեռքբերումներից է դպրոցների տնօրենների հավաստագրման և վերապատրաստման նոր կարգի ընդունումը: Հինգ կազմակերպություններում իրականացվել են վերապատրաստումներ դպրոցի տնօրենի թեկնածուների, ովքեր նախարարությունում կհանձնեն համապատասխան քննություններ և դրական արդյունքի դեպքում կստանան դպրոցի տնօրեն աշխատելու հավաստագիր:

Ընդունվել է նաև ուսուցիչների ատեստավորման նոր կարգը, որը հնարավորություն է տալիս իրականացնել տարբերակված ֆինանսավորում և մասնագիտական հետագա կատարելագործման համար ստեղծում խրախուսման խթաններ:

Հանրակրթության ոլորտում շարունակվել են 12-ամյա կրթության ուսումնական պլանի, ինչպես նաև առարկայական նոր ծրագրերի և չափորոշիչների ներդրումը:

12-ամյա կրթակարգի տեսանկյունից հանգուցային է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել համակարգի արդյունավետությունը, հաղթահարել ավագ դասարաններում առկա հիմնախնդիրները և ապահովել սովորողների լիարժեք պատրաստվածությունը՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար: Դրան համապատասխան շարունակվել են ավագ դպրոցի դասագրքերի տպագրության, մանկավարժական կադրերի վերապատրաստման գործընթացները:

Առանձնահատուկ կարևորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու ուսումնական հաստատությունների տեխնիկական համալրումը, ինչպես նաև առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ամբողջականացումը:

2010 թվականին ևս 43 դպրոցներ վերակազմավորվեցին առանձին գործող ավագ դպրոցների: Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը նախատեսվում է ավարտել մինչև 2012թ.:

Փորձաքննություն են անցել և գործառնությունների երաշխավորվել հանրակրթական ավագ դպրոցի տարբեր հոսքերի համար նախատեսված ընդհանուր թվով 37 անուն դասագրքեր և 12 անուն ուսուցչի ձեռնարկներ:

Համաձայն նոր առարկայական ծրագրերի և տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառության բնագավառների վերապատրաստման դասընթացներ են անցել հանրակրթական դպրոցների շուրջ 9400 ուսուցիչներ:

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է օտար լեզուների դասավանդման բարելավման խնդիրը: Համաձայն 2010 թվականին հաստատված ուսումնական պլանի 3-րդ օտար լեզվի դասավանդումը, դպրոցի ընտրությամբ, սկսվում է 5-րդ դասարանից:

Հանրակրթության ոլորտի կարևոր խնդիրներից է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներմուծումը հանրակրթական դպրոց և դրանց համալրումը ժամանակակից համակարգչային միջոցներով: 2010 թվականին շարունակվել է դպրոցների համակարգչայնացման և համացանցայնացման աշխատանքը՝ ինտերնետը հասանելի է դարձել ևս 300 դպրոցում, ընդհանուր առմամբ 944 դպրոց ապահովված է ինտերնետի մուտքով: Հանրակրթական դպրոցներում համակարգիչ-աշակերտ հարաբերակցությունը կազմել է 30:

Կրտսեր դպրոցում համակարգչային հմտությունների ուսուցումը կազմակերպելու նպատակով կազմակերպվել են «Լոգո» համակարգչային միջավայրի ներդրման ծրագրի իրականացման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Հայաստանի տարբեր մարզերի 17 դպրոցների 21

ուսուցիչներ:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի մասնագիտական որակյալ կրթությունն ու ուսուցումը:

Դրա ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:

Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացումներն ապահովելու և ոլորտը կարգավորելու նպատակով մշակվել և հաստատվել են մի

շարք նորմատիվ փաստաթղթեր: Բարեփոխումները հիմնականում իրականացվել են նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման ու ներդրման, անձնակազմի

վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման, նյութատեխնիկական բազայի հարստացման և վերագինման, ինչպես նաև

շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:

Հաստատվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության 19 մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչներ, որոնք փորձարկման փուլում են՝ համաձայն չափորոշիչների մշակման

հայեցակարգի:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության 30

մասնագիտությունների և որակավորումների համար կարողութենամետ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մշակվել են 14 ուսումնական

պլաններ և մոդուլային ծրագրեր:

2010 թվականին հանրապետության 86 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում վերապատրաստվել են շուրջ 1000

տնօրեններ, փոխտնօրեններ և մասնագետներ: Վերապատրաստումն անցկացվել է մշտադիտարկման և խորհրդատվության ձևաչափով՝ նախապես մշակված

գործողությունների պլանի, հարցերի շրջանակի և օժանդակող նյութերի հիման վրա:

Ուսումնական հաստատությունների շենքային պայմանները բարելավելու

նպատակով շինարարական աշխատանքներ են ընթանում Արմավիրի

գյուղատնտեսական և Արտաշատի պետական քոլեջներում ու Թալինի

արհեստագործական ուսումնարանում, որոնք կավարտվեն առաջիկա չորս

ամիսների ընթացքում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող ՄԿՈՒ ոլորտին տեխնիկական

աջակցության ծրագրի շրջանակներում 12 փորձարարական քոլեջներին

տրամադրվել են 9 տեսակի 20 մասնագիտական ուսումնական լաբորատորիաներ:

Նշված քոլեջներին և հավելյալ ևս 4 ուսումնական հաստատությունների

տրամադրվել են թվով 352 սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝

համակարգչային տեխնիկա, տպագրական և պատճենահանման սարքեր:

2005թ. Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին,

ստանձնելով պատասխանատվություն՝ ապահովել Բոլոնիայի գործընթացի

հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին

ուղղությունների և մասը դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն

կրթական տարածքի (ԵԲԿՏ):

Ինտեգրումը ԵԲԿՏ-ին ենթադրում է իրականացնել խորքային փոփոխություններ ՀՀ

բարձրագույն կրթական համակարգում՝ համապատասխանեցնելու համար այն

Բոլորնիայի գործընթացի պահանջներին: Մասնավորապես, ներմուծել համընթեռնելի և համեմատելի որակավորումների եռաստիճան համակարգ, կատարել անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային եղանակին՝ միաժամանակ նախաձեռնելով արմատական ծրագրային վերափոխումներ և խթանելով ուսանողների ու դասախոսների անարգել ակադեմիական շարժունությունը, արմատավորել որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով ազգային համակարգի և ԵԲԿՏ արտաքին գրավչության բարձրացմանը, նախադրյալներ ստեղծել հարատև կրթության համակարգի ձևավորման, ընթացող բարեփոխումներում՝ ուսանողության դերի և ազդեցության բարձրացման, բուհերում կրթական և գիտական գործընթացների միահյուսման համար: Փոխկապակցված այս համակարգային փոփոխությունները նախապայմաններ են ԵԲԿՏ-ին Հայաստանի լիարժեք մասնակցության համար: «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի մրցակցային դաշտի և միասնական քաղաքականության ստեղծմամբ, որը հնարավորություն կտա հավասար պայմաններ ստեղծել բոլոր դիմորդների և ուսանողների համար: 2010/2011 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում (հետազոտողի կրթական ծրագրով) ներդրվել է կրեդիտային համակարգ: Ներկայումս եռամյա ծրագրով նախատեսված է 180 կրեդիտ: Հաստատվել է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ուղեցույցը: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում մշակվել են ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության սկզբունքները, պայմանավորված բարձրագույն կրթության կառավարման ու ֆինանսավորման բնագավառներում բարեփոխումների անհրաժեշտությամբ: Մեկնարկվել է բուհերի մրցակցային ֆինանսավորման փորձնական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս բոլոր բուհերին մրցութային կարգով ստանալ դրամաշնորհներ՝ նորարարական կրթական գործունեության և բարեփոխումներ իրականացնելու համար: Ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը», ինչը թույլ կտա էլեկտրոնային միջավայրի, նորարար տեխնոլոգիաների օգտագործումը կրթության և գիտության ոլորտներում դարձնել ավելի կանոնակարգված և քաղաքացիներին ապահովել կրթության հավելյալ հնարավորություններով: Մինչև 2013թ. Որակավորումների ազգային շրջանակը պետք է դառնա Հայաստանում կրթության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ շնորհված որակավորումների որակը պետք է ապահովված լինի պետական չափորոշիչներով, որոնք անցել են եվրոպական վերլուծության քննությունը, և պետք է նպաստի աշխատուժի շարժունակությանը՝ տեղական և միջազգային մակարդակում: Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը նշանակալի ներդրում է ունենալու մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում և դրանով իսկ նպաստելու է տեղական և միջազգային ճանաչում ունեցող որակավորումների

մակարդակների շրջանակում մատչելիությանը, փոխադրմանն ու առաջխաղացմանը:

Մասնագիտական և ակադեմիական աստիճանների որակավորման համակարգի համադրելիության ապահովման նպատակով մշակվել են մասնագիտական կրթության որակավորումների բնութագրերը՝ ըստ որակավորման աստիճանների, որը Հայաստանի որակավորումների ազգային շրջանակի մասն է կազմելու: 2010 թվականին շարունակվել է հանրապետության աշխատաշուկայի պահանջներին և տնտեսության ու գիտության զարգացման կարիքներին համապատասխան մասնագետների, ինչպես նաև ՀՀ պետական բուհերում և գիտական կազմակերպություններում գիտական առաջնակարգ ուղղություններով գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործընթացը: Մասնավորապես՝ հաստատվել է 2010/2011 ուսումնական տարվա նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման ընդունելության տեղերի քանակը՝ 5103, պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի՝ շուրջ 21000, որից 2500-ը անվճար, 18500-ը վճարովի, և մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերի քանակը՝ շուրջ 1500, ինչպես նաև ասպիրանտուրայի՝ 379, և դոկտորանտուրայի՝ 14, ընդունելության տեղերի քանակը:

2010 թվականին «Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը» մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2007թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» թ.ՆՀ-37-Ն հրամանագրի և «Կայուն զարգացման ծրագրի» (Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թ.1207-Ն որոշում) հիմնադրույթներին համապատասխան: Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը: Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով:

Գիտության ոլորտում իրականացվել են հետևյալ ախատանքները:

1. «Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» 115-րդ կետի կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի ապրիլի 29-ի N9.2.1/[7178]-10 հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որում ընդգրկվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և բուհերի ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի կողմից մշակված «Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (վերջնաժամկետ 2010թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ) 2010

թվականի հոկտեմբերի 13-ին N01/9.2.1/10378-10 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ նախարարություններ և ՀՀ ԳԱԱ կարծիքների: Ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո՝ նախագիծը 2010 թվականի նոյեմբերի 10-ին N01/9.2.1/11272-10 գրությամբ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության, իսկ 2010 թվականի նոյեմբերի 19-ին N01/9.2.1/12053-10 գրությամբ ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը:

Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի նիստի N14.3/[56428]-10 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հարցը քննարկումից հանվել է և 2010թ. դեկտեմբերի 28-ի N02/14.1/16865-10 գրությամբ վերադարձվել:

2.«Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» 118-րդ կետի կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի ապրիլի 29-ի N9.2.1/[7180]-10 հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որում ընդգրկվել են ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և բուհերի ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի կողմից մշակված «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (վերջնաժամկետ 2010թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ) 2010 թվականի նոյեմբերի 16-ին N01/9.2.1/11780-10 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ նախարարություններ և ՀՀ ԳԱԱ կարծիքների: Ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո նախագիծը 2010 թվականի դեկտեմբերի 2-ին N01/9.2.1/12475-10 գրությամբ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 10-ին N01/9.2.1/11853-10 գրությամբ ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության 2010թ. դեկտեմբերի 23-ի N02/14.1/16648-10 եզրակացության հիման վրա՝ վերադարձվել է լրամշակման:

ՀՀ կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի ՀՀ կրթության և գիտության նախարարության մասով նախատեսված 15 միջոցառումներից կատարվել է 15-ը, որից 13-ը՝ ժամկետին, իսկ 2-ը՝ ուշացումով: Ծրագրի 109 և 110-րդ կետերի ժամանակին չկատարումը պայմանավորված է՝ 109. «ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի N327 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ. Գիտական աստիճանաշնորհման գործընթացը կանոնակարգող 10-ից ավելի ենթաօրենսդրական փաստաթղթերի համատեղ վերանայմամբ և լրամշակմամբ: 110. «Առանձին գործող ավագ դպրոցների ստեղծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.

Առանձին գործող ավագ դպրոցների ցանկը ճշտելու և շահագրգիռ նախարարությունների առաջարկություններն ու դիտողություններն քննարկելու անհարժեշտությամբ:

Համաձայն ՀՀ վարչապետի 27.04.2010թ. թիվ 02/11.3/4801-10 և 11.05.2010թ. թիվ 02/11.3/5506-10 հանձնարարականների՝ առաջարկություններ ՀՀ ՀՆԱ-ի աճի վրա գիտության և կրթության ոլորտի ազդեցության մասին. ՀՀ ԿԳ նախարարությունը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակել է առաջարկությունների փաթեթ, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն ՀՀ ԿԳ նախարարության 23.06.2010թ. թիվ 01/06.2/5792-10 գրությամբ:

2011 թվականին նախարարությունը շարունակելու է հետամուտ լինել կրթության որակի և մատչելիության բարձրացման խնդրին: Մասնավորապես՝ առանձնակի կարևորվելու են բարձրագույն կրթության բարեփոխումները, դպրոցական դասագրքերի որակի բարձրացումը, նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատությունների կարողությունների ընդլայնումը: